ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEAB-5085-448D-AA19 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4159/02/26 ք. Երևան
21 Ապրիլի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ՄԱԼԿ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հայտարարված թիվ [ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 26/2] ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի բնութագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 16.04.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով [այսուհետ նաև՝ Համակարգ] հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հայտարարված թիվ [ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 26/2] ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի բնութագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 16.04.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 17.04.2026 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքից պահանջել ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 26/2 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. Նաիրի Թորոսյան Թելմանի Ա/Ձ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից հայտարարված թիվ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 26/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի գնման առարկայի բնութագիրը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքից պահանջել ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 26/2 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի հունիսի 08-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող գործողության (անգործության) հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև գործողության (անգործության) կատարման՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Միևնույն ժամանակ պարզաբանել, որ վիճարկվող գործողության (անգործության) իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող են ներկայացվել միայն ապացույցները պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:
6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամալյան

ԿԱՐԵՎՈՐՎԱԾ Է
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՄԲ
ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am